**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ԳՀԱՊՁԲ-20-2/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 25.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Յունիք Լայն» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիումի) Ա/Ձ Բաղդո Հակոբյանի հետ), ի դեմս տնօրեն Ա. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 19.12.2019թ. կնքված №ԳՀԱՊՁԲ-20-2/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.14 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայնագրի №1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 24 145 032 (քսանչորս միլիոն մեկ հարյուր քառասունհինգ հազար երեսուներկու) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 2 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 և №2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ պատրաստության գլխավոր վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Յունիք Լայն» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Խուդյակովի փ. 6 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «ԻնեկոԲանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 9000110224537 | Հ/Հ 2050922109591001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00919446 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ | Տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-2/3-1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը 2020թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ |
| 1 | Կրովի ուսումնանյութական բազայի արկղեր (Մարտավարական պատրաստության լրակազմ) | լրակազմ | 102 | 124496 | 12698592 | 102 |
| 2 | Կրովի ուսումնանյութական բազայի արկղեր (Կրակային պատրաստության լրակազմ) | լրակազմ | 102 | 112220 | 11446440 | 102 |

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈՂՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Յունիք Լայն» ՍՊԸ տնօրեն

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-2/3-1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | անվանումը | CPV կոդը | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | Կրովի ուսումնանյութական բազայի արկղեր (Մարտավարական պատրաստության լրակազմ) | 37491200/501 | 12698592 | 12698592 | 12698592 | 12698592 | 12698592 | 12698592 | 12698592 | 12698592 | 12698592 |
| 2 | Կրովի ուսումնանյութական բազայի արկղեր (Կրակային պատրաստության լրակազմ) | 37491200/502 | 11446440 | 11446440 | 11446440 | 11446440 | 11446440 | 11446440 | 11446440 | 11446440 | 11446440 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Յունիք Լայն» ՍՊԸ տնօրեն

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ